Արձանագրություն N 2
ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 04.11.2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բարսեղյան
Հանձնաժողովի անդամներ՝ Շ. Իսախանյան
Լ. Սարիբեկյան
Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Կ. Բարսեղյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հոկտեմբերի 28-ին, ժամը 12:00-ին:

բ) Գնման գործընթացը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Չափաբաժնի համարը*	*Ապրանքի անվանումը*	*Քանակը*	*Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նախահաշվային կողմնորոշիչ գին*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ	2	Դյուրակիր համակարգիչներ	1	450000	419 000		419 000
2	<<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ	3	Բազկաթոռներ	20	1 100 000	761 666. 67	152 333. 33	914 000.00
	<<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ					916 500	183 300	1 099 800
3	<<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ	4	Ip հեռախոսներ	2	200 000	355 000	-	355 000
4	<<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ	5	Բազկաթոռ ղեկավարի	1	210 000	133 325	26 665	159 990
	<<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ					155 833. 33	31 166.67	187 000.00

ե) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է 28.10.2019թ. նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և ծանուցել բավարար գնահատված ներքոնշյալ կազմակերպություններին 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ, չափաբաժինների մասով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ) գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցելու մասին.

2019 թվականի նոյեմբերի 4-ին

2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով <<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ-ի հետ ժամը 11:30-ին,

3-րդ չափաբաժնի մասով <<ՄԵՐԿԱԴՈ>> և <<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ-ների հետ ժամը 11:45-ին,

5-րդ չափաբաժնի մասով <<ՄԵՐԿԱԴՈ>> և <<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ-ների հետ ժամը 12:00-ին:

1.3 Հրավիրված բանակցություններին <<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ-ն և <<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ-ն չեն ներկայացել,

- 3-րդ չափաբաժնի մասով <<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ-ի կողմից բանակցությունների արդյունքում նոր գնային առաջարկ չի ներկայացվել,
- 5-րդ չափաբաժնի մասով <<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ-ի կողմից բանակցությունների արդյունքում ներկայացվել է հետևյալ նոր գնային առաջարկը՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Մասնակցի կողմից առաջարկված ընդհանուր գին
1	<<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ	132 500	26 500	159 000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին

(Կ. Բարսեղյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված-փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Չափաբաժին 2 Դյուրակիր համակարգիչներ		
Մրցույթում զբաղեցրած տեղը	***Մասնակցի անվանումը***	***Հայտի գնահատականը***
1	<<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ	բավարար
Չափաբաժին 3 Բազկաթոռներ		
Մրցույթում զբաղեցրած տեղը	***Մասնակցի անվանումը***	***Հայտի գնահատականը***
1	<<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ	բավարար
2	<<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ	բավարար
Չափաբաժին 4 Ip հեռախոսներ		
Մրցույթում զբաղեցրած տեղը	***Մասնակցի անվանումը***	***Հայտի գնահատականը***
-	<<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ	անբավարար
Չափաբաժին 5 Բազկաթոռ ղեկավարի		
Մրցույթում զբաղեցրած տեղը	***Մասնակցի անվանումը***	***Հայտի գնահատականը***
1	<<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ	բավարար
2	<<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ	բավարար

2.2. Հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը՝ համապատասխանաբար ընթացակարգի 4-րդ և 1-ին չափաբաժինները (օդորակիչ) հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Կ. Բարսեղյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Կ. Բարսեղյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Կ. Բարսեղյան

Անդամ՝ ---------- Շ. Իսախանյան

---------- Լ. Սարիբեկյան

---------- Հ. Բաղինյան

---------- Լ. Խալաթովա

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան